

Ա Շ Խ Ա Ր Հ Ա Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
ВСЕМИРНАЯ ПОЛИТИКА
WORLD POLITICS

ՀՏԴ՝ 94

ԱՄՆ-Ի ՀԵՏՄԱՌՇՊԱՏԵՐԱԶՍՅԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ

ՀԻՄՔԵՐԻ ՇՈՒՐՉ

Աստղիկ Հայրապետյան

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Բանալի բառեր՝ *Մերձավոր Արևելք, Իսրայել, Պաղեստինի ազատագրման կազմակերպություն, ՄԱԿ, Անվտանգության խորհուրդ, ակտ, բանաձև, համաձայնություն, Իրաք, Իրան:*

Հոդվածում ներկայացվում է Սառը պատերազմի և հետսառըպատերազմյան առաջին տասնամյակում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության իրականացման իրավապայմանագրային հիմքը, լուսաբանվում են առանցքային իրավական փաստաթղթերի առանձնահատկությունները, վերլուծվում վերջիններիս նշանակությունը ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության կազմակերպման տեսանկյունից: Այս համատեքստում փորձ է արվել զարգացնելու արևմտյան և ռուս քաղաքագետների նորագույն գործերում խնդրո առարկային վերաբերող որոշ դրույթներ՝ վերջիններիս առնչվող միջազգային և ներպետական իրավապայմանագրային հիմքի ուսումնասիրության համադրմամբ:

Նախաբան. Հետսառըպատերազմյան շրջանում Մերձավոր Արևելքում դիրքերի ամրապնդման և տարածաշրջանային քաղաքականության լեգիտիմացման տեսանկյունից ԱՄՆ-ին անհրաժեշտ էր իրավական և պայմանագրային ամուր հիմքերի ստեղծումը: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձևերը, իսրայելա-արաբական

խաղաղության գործընթացի շրջանակներում ձեռք բերված միջազգային համաձայնագրերը և ԱՄՆ-ի ներքին իրավական ակտերը ծառայեցին որպես տարածաշրջանում ընդլայնվելու ուղղակի և անուղղակի ազդեցության միջոցներ¹²:

Խաղաղության գործընթացի շրջանակներում ընդունված ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերը

ԱՄՆ-ը իսրայելա-արաբական խաղաղության բանակցային գործընթացի սկզբից հանդես եկավ որպես միջնորդ, իսկ 20-րդ դարի 60-70-ականներին ԽՍՀՄ-ի գործուն մասնակցությամբ մշակեց արաբա-իսրայելյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմնարար սկզբունքները, որոնք ամրագրվեցին ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ (1967թ.) և 338-րդ (1973թ.) բանաձևերում³՝ ձևավորելով խաղաղության գործընթացի հիմքը: Այս բանաձևերը կոչ էին անում Բարայելի դուրս բերելու իր զինված ուժերը 1967թ. «օկուպացված տարածքներից»՝ փոխարենը ստանալով անվտանգության երաշխիքներ հարևաններից և սկսել բանակցություններ՝ կրակի դադարեցման նախապայմանով: Արաբական երկրների համար բանաձևի ընդունումը կնշանակեր Բարայել պետության գոյության ճանաչումը: Նրանք նաև դժգոհ էին փախստականների վերադարձի մասին 194-րդ բանաձևին անհրաժեշտ հղման բացակայությունից, քանի որ 242-րդ բանաձևում խոսվում էր միայն բնակեցման մասին⁴: Ինչ վերաբերում էր Բարայելի կողմից զինված ուժերի հետքաշմանը, ապա դրանցում առկա էր «գրավյալ տարածքներ» արտահայտության անգլերեն (*territories occupied*) և ֆրանսերեն (*des territoires*) տարբերակների սուբյեկտիվ մեկնաբանում՝ իսրայելական զինված ուժերը որոշ տարածքներից, թե բոլոր գրավյալ տարածքներից դուրս բերելու մասով:

Չնայած հակամարտության կողմերի շրջանում տիրող նման ոչ միանշանակ մոտեցմանը՝ 1988թ. Պաղեստինի ազատագրման կազմակերպությունը, առանց Բարայելի փոխադարձության, ի դեմս Յասիր Արաֆատի ՄԱԿ-ի ԳԱ-ի նիստում հայտարարեց, որ հրաժարվում է ահաբեկչության բոլոր տեսակներից⁵ և ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերը համարում է բանակցային գործընթացի հիմք ու ճանաչում «մերձավորարևելյան հակամարտության բոլոր կողմերի, ինչպես նաև Պաղեստին և

¹ **Le Billon, P., El Khatib, F.** (March 2004) "From free oil to 'freedom oil': terrorism, war and U.S. Geopolitics in the Persian Gulf", *Geopolitics*, Volume 9, Issue 1 p. 109.

² Review (**Winter** 1982): "State Power and Industry Influence: American Foreign Oil Policy in the 1940s", *International Organization* 36, no. 1 p. 168, Նախորդ դարասկիզբը նշանավորվում է ԱՄՆ-ի և Մերձավոր Արևելքի համագործակցության 1928թ. «Կարմիր գծի պայմանագրի» ստորագրմամբ, որով փորձ էր արվում սահմանափակել նավթի մատակարարումները և նավթի գնի վերահսկման հարցում ապահովել ամերիկյան ընկերությունների առաջնայնությունը համաշխարհային շուկայում:

³ **Сурков Н. Юр.** Политика США в ближневосточном урегулировании в 70-е гг., стр. 4 XX в. - начале XXI в., стр. 4.

⁴ *UN Resolutions 242 and 338, Te Reaut Institute, 11.11.04, <http://www.reut-institute.org/>.*

⁵ Backchannel Message From Secretary of State Kissinger to the Egyptian Presidential Adviser for National Security Affairs (Ismail). Washington, October 24, 1973.//*Arab-Israeli Crisis and War, 1973, p. 720—721, <https://history.state.gov/>.*

Իսրայել պետությունների խաղաղ և անվտանգ համակեցությունը»⁶: Սա ողջունվեց ԱՄՆ-ի կողմից, և սկսած 1988թ.-ից, ԱՄՆ-ը արդեն միջնորդական հարաբերություններ էր հաստատել հակամարտության բոլոր կողմերի հետ⁷:

Դեռևս 1991-ի մարտի 6-ին, Ջորջ Բուշ Ավագը հասակեցրեց ԱՄՆ-ի դերը խաղաղության գործընթացում. «Այս տարածաշրջանի բոլոր խնդիրների համար չկա մեկ լուծում, չկա բացառապես ամերիկյան պատասխան: Ամերիկյան աշխատելու է անխոնջ՝ հանդես գալով որպես դրական փոփոխությունների կատալիզատոր»⁸: Սա վկայում էր, որ Վաշինգտոնը հակամարտության կողմերի նախաձեռնողականության պայմաններում մտադիր էր նույնիսկ Քուվեյթի ճգնաժամից առաջ շարունակել ակտիվ միջնորդությունը՝ երկխոսության խթանման և դյուրացման ճանապարհով⁹:

Ծոցի ճգնաժամից հետո տարածաշրջանում ԱՄՆ-ը կայունության և խաղաղության հասնելու մեծագույն խոչընդոտ սկսեց դիտարկել արմատական իսլամական ահաբեկչությունը: Եթե ի սկզբանե բանաձևերում տեղ գտած «անվտանգության երաշխիքներ» եզրույթը մեկնաբանվում էր որպես Իսրայելի հարևան պետությունների կողմից զենքի կիրառման նկատմամբ միջազգային վերահսկողության սահմանումով, ապա ազգամականացված գոտիների ստեղծումով, վաղ նախազգուշացման համակարգի և միջազգային խաղաղապահների առկայությամբ ագրեսիայից հրաժարումով, ապա սկսած 90-ականների վերջից ԱՄՆ-ը և Իսրայելը այն սկսեցին մեկնաբանել Իսրայելի յուրաքանչյուր քաղաքացու ֆիզիկական անվտանգության երաշխավորման լույսի ներքո, որի չապահովման պարագայում Իսրայելից չի պահանջվելու դուրս գալ «օկուպացված տարածքներից»¹⁰:

Հաճախ ԱՄՆ-ը, մասնակցելով բանաձևերի ընդունմանը, հետագայում չէր ցուցաբերում գործնական հետևողականություն դրանց իրականացման հարցում, հատկապես, երբ դրանք վերաբերում էին Իսրայելի քննադատությանը¹¹: Մասնավորապես, ՄԱԿ-ի ԱԽ-ի 446-րդ (1979 թ.) և 465-րդ (1980 թ.) բանաձևերը, որ պահանջում էին Իսրայելից դուրս գալ Գազայի հատվածի, Արևելյան Երուսաղեմի և Հորդանան գետի արևմտյան ափի օկուպացված տարածքից, քանի որ դա միջազգային հումանիտար ի-

⁶ **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 69:

⁷ Statement on Diplomatic Talks With the Palestine Liberation Organization, December 14, 1988, <http://www.reagan.utexas.edu>

⁸ After The War: The President; Transcript of President Bush's Address on End of the Gulf War, March 7, 1991, The New York Times, www.nytimes.com .

⁹ **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 88:

¹⁰ **Ronny Modigs**, MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p. 30.

¹¹ 1972-2000թթ. ԱՄՆ-ը մոտ 40 անգամ դեմ է հանդես եկել ՄԱԿ-ի ԱԽ-ի կողմից ընդունված նման բանաձևերի ընդունմանը (տե՛ս **Նույնը**):

րավունքից՝ Ժնևի 4-րդ կոնվենցիայի պահանջներից էր բխում (անօրինական է համարվում զինված ուժերի կողմից բռնազավթված հողերի վրա խաղաղ քաղաքացիական բնակչության բնակեցումը): Բանաձևն անօրինական էր ճանաչում Իսրայելի կողմից 1967թ. գրավումը և պնդում, որ այն խոչընդոտ է Մերձավոր Արևելքում խաղաղության հաստատմանը: Սակայն, 1997թ. ԱՄՆ պետքարտուղար Ուորրեն Բրիստոֆերի՝ Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուին ուղղած "Letter of Assurance"-ում, նշվում էր, որ ԱՄՆ-ը ձեռնպահ է մնում ՄԱԿ-ի ձևակերպումներից՝ «օկուպացված տարածքների» փոխարեն առաջարկելով «վիճելի տարածքներ» տարբերակը:

Հետսառը պատերազմյան շրջանում՝ մասնավորապես Օսլոյի մեկնարկին զուգահեռ (1993թ.), ակնհայտ դարձավ, որ ՄԱԿ-ը այլևս գլխավոր դերակատարը չէ խաղաղության գործընթացում, և Օսլոյի համաձայնությունները գերակայություն ունեն ՄԱԿ-ի բանաձևերի նկատմամբ¹²:

Այս համատեքստում հատկանշական է նաև ԱՄՆ-ի մասնակցությունը 2002թ.-ից ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության հիմնասյուններից մեկին՝ ասիական շրջանի պայքարին առնչվող ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի մշակմանը: Ի դեպ, ԱՄՆ-ի միջնորդությամբ ընդունված այդ բանաձևերը հաճախ դատապարտում էին հենց Իսրայելի գործողությունները՝ պահանջելով հետևել միջազգային հումանիտար իրավունքի նորմերին:

Դրանցից էր Իբրահիմ մզկիթում (Նախահայրերի քարանձավ) առանց քվեի ընդունված պաղեստինցի հավատացյալների կոտորածը դատապարտող ՄԱԿ-ի ԱԽ-ի 904-րդ (1994թ.) բանաձևը: Կոտորածը հարվածի տակ էր դնում Օսլոյի գործընթացը, ուստի ՄԱԿ-ը, վկայակոչելով պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին Ժնևի 4-րդ կոնվենցիան, պահանջեց Իսրայելից՝ օկուպացնող ուժից, շարունակել առգրավել հրեաների մոտ առկա զենքերը՝ կանխելու համար նման գործողությունները¹³:

Այս շարքից էր նաև ՄԱԿ-ի ԱԽ-ի 1322-րդ (2000թ.) բանաձևը, որը Երուսաղեմի Ալ-Հարամ Ալ-Շերիֆում տեղի ունեցած կոտորածի արձագանքն էր: Բանաձևը պա-

¹² **Ronny Modigs** MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p.30, մասնավորապես այստեղ կարելի է մեջբերել Մադլեն Օլբրայթին, որ նշում էր, որ «վերջնական կարգավիճակ» առաջ քաշող բանաձևերի լեզուն և ձևակերպումները պետք է փոփոխվեն, քանի որ դրանք բանակցության առարկա են հակամարտության կողմերի միջև՝ ընդգրկելով ինքնիշխանության, Իսրայելի վերջնական կարգավիճակի, տարածքային, բնակավայրերի ու փախստականների հարցերը:

¹³ Resolution 904 (1994) Adopted by the Security Council at its 3351st meeting, 18 March 1994, <http://unscr.com>.

հանջում էր անհապաղ դադարեցնել առճակատումը, անցկացնել ողբերգական դեպքերի օբյեկտիվ քննություն, ապահովել խաղաղությունը՝ սադրանք համարելով Արիել Շարոնի այցը¹⁴:

Խաղաղության գործընթացում ձեռք բերված համաձայնությունները

Օոցի ճգնաժամից հետո՝ սկսած 1991թ. փետրվարից, ԱՄՆ-ի նախագահ Ջ. Բուշ Ավագի կողմից նախաձեռնվեցին արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի բանակցությունների հրավիրման գործողություններ¹⁵: 1991թ. մարտին ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերի մերձավորարևելյան շրջայցը ցույց տվեց, որ հակամարտող կողմերը գործնականում պատրաստ են ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերի հիման վրա իսրայելա-արաբական և իսրայելա-պաղեստինյան բանակցությունների վարմանը¹⁶:

Սակայն 1992թ. նոյեմբերին դեմոկրատ Բիլլ Քլինթոնի նախագահ ընտրվելուց հետո սկզբնական շրջանում խաղաղության գործընթացում ակտիվ դիվանագիտական նախաձեռնություններ տեղի չունեցան: Նոր պետքարտուղար Ու. Քրիստոֆերի դիրքորոշումն այս հարցում զգուշավոր էր, իսկ Բ. Քլինթոնը գտնում էր, որ ԱՄՆ-ը պետք է օգնի կողմերին խաղաղության հասնելու գործում՝ առանց բանակցային գործընթացում սեփական գործողություններով շրջադարձային և ժամանակավրեպ փոփոխություններ¹⁷: Բ. Քլինթոնը կարևորում էր նախևառաջ իսրայելա-սիրիական խնդրի լուծումը, ինչն օրինակ կհանդիսանար Հորդանանի և Լիբանանի համար՝ հնարավորություն տալով երկկողմանի փոխզիջումներ կորզել Իսրայելից և ՊԱԿ-ից¹⁸: Սակայն կողմերը

¹⁴ Resolution 1322 (2000) Adopted by the Security Council at its 4205th meeting, 7 October 2000, <http://unscre.com>, Այն սադրանք համարեց Արիել Շարոնի այցը Տաճարի լեռ կամ ինչպես մուսուլմաններն են ասում՝ Հարամ աշ-Շարիֆ, որտեղ գտնվում է մահմեդականների 3-րդ սրբությունը՝ ալ-Աքսա մզկիթը: Այցը ուղեկցվում է պաղեստինցիների բողոքի ցույցերով, ինչին ի պատասխան սկսվում է բախում Շարոնին և Լիքուդ կուսակցության ներկայացուցիչներին ուղեկցող փողոցային անկարգությունները կանխարգելող ոստիկանների միջև: Սա կրում է մասսայական բնույթ, Արևելյան Երուսաղեմում և այլ վայրերում ուղեկցվում է ազգամիջյան բախումներով, որին զոհ է գնում մոտ 80 պաղեստինցի:

¹⁵ **G. H. W. Bush**. Address Before a Joint Session of Congress on the End of the Gulf War, March 6, 1991, <https://millercenter.org/>, Կոնգրեսի երկու պալատների առջև ունեցած ելույթում Ջ. Բուշ Ավագը նշեց, որ Օոցում պատերազմի ավարտը պետք է լինի պատմության մեջ առաջին անգամ ընդհանուր ազդեցորի դեմ միավորված Իսրայելի և արաբական երկրների միջև խաղաղության հաստատման սկիզբ:

¹⁶ **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 92: Մադրիդյան կոնֆերանսի ձեռքբերումը նախևառաջ այն էր, որ մասնակիցները համաձայնության եկան «խաղաղություն՝ տարածքների փոխարեն» սկզբունքի շուրջ, և ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 242-րդ և 338-րդ բանաձևերի վկայակոչմամբ՝ արաբական երկրները, հետևելով Եզիպտոսին, փաստացիորեն ճանաչեցին Իսրայելը որպես իրավահավասար գործընկեր՝ համաձայնելով ուղիղ բանակցություններ վարել վերջինիս հետ:

¹⁷ **Ronny Modigs**, նշվ. աշխ., էջ 26:

¹⁸ **Сурков Н. Юр.**, նշվ. աշխ., էջ 96:

համաձայնության չեկան իրադրության կայունացման, տարածքային հարցերի ու իսրայելական զինուժի դուրսբերման գործընթացի հերթականության շուրջ¹⁹:

Ստեղծված փակուղում իսրայելա-պաղեստինյան ուղղությանը շունչ հաղորդեցին Իսրայելի ու ՊԱԿ-ի միջև Նորվեգիայի միջնորդությամբ 1993թ. հունվար-օգոստոս ամիսներին կայացած գաղտնի բանակցությունները: Նորվեգական և իսրայելական կողմերի առաջարկով համաձայնությունը ստորագրելու էր Վաշինգտոնում՝ հաշվի առնելով դրա իրականացման համար անհրաժեշտ երաշխիքները և ԱՄՆ-ի քաղաքական ու ֆինանսական աջակցության կարիքը:

ԱՄՆ-ի պահանջով կողմերը նախքան համաձայնությունը ստորագրելը հայտարարեցին միմյանց փոխադարձաբար ճանաչելու մասին²⁰:

1993թ. օգոստոսի 20-ին Իսրայելի և ՊԱԿ-ի միջև Օսլոյում ստորագրվեց խաղաղության համաձայնագիր, որով Հորդանան գետի արևմտյան ափին և Գազայի հատվածում ստեղծվեց Պաղեստինյան ազգային վարչություն (ՊԱՎ): Համաձայնագրով վերջ դրվեց առաջին ինտիֆադային: Օրեր անց՝ սեպտեմբերի 13-ին, Վաշինգտոնում Իսրայելի և ՊԱԿ-ի միջև ստորագրվեց Անցումային ինքնակառավարման համաձայնությունների մասին սկզբունքների հռչակագիրը, որը ներառում էր օգոստոսի համաձայնության հիմնական սկզբունքները^{21,22}:

Խաղաղության լրացուցիչ ազդակ էր Օսլո-2 համաձայնագիրը: Համաձայնությունն առաջին անգամ ստորագրվեց 1995թ. սեպտեմբերի 24-ին Թաբայում՝ Եգիպտոսում, և 4 օր անց՝ սեպտեմբերի 28-ին, Վաշինգտոնում Յ. Ռաբինի և Յ. Արաֆատի միջև: Օսլո 2-ը ենթադրում էր պաղեստինյան օրենսդրական խորհրդի ստեղծումը²³:

Այսպիսով, չնայած ԱՄՆ-ը չմասնակցեց Օսլոյին, այն կարևոր դեր խաղաց բանակցված համաձայնագրով սկիզբ առած հետագա գործընթացում: Հակամարտության բոլոր կողմերը ճանաչում էին ԱՄՆ-ի հեղինակությունը և դերը թե՛ որպես

¹⁹ Նույն տեղում, էջ 100: Իգհակ Ռաբինի կողմից տարածքներից «ամբողջական դուրս գալուն» 1992թ. համաձայնելուց 2 տարի անց պարզվեց, որ սիրիական կողմն ընդհանրապես այլ կերպ է պատկերացնում այն (ի հակադրումն իսրայելական 5-ամյա անցումային շրջանին, ամերիկյան արագ արձագանքման ուժերի տեղակայման և կայունացման առաջարկին՝ սիրիացիները պահանջում էին ՄԱԿ-ի 242-րդ բանաձևի իրականացում և 1923թ. ենթամանդատային տարածքների սահմանի վերականգնում):

²⁰ Նույնը:

²¹ **Ronny Modigs**, MAJ, Swedish Armed Forces, United States Foreign Policy in The Middle East After The Cold War, Kansas, 2003, p. 26.

²² Declaration of Principles on Interim Self-Government Arrangements, September 13, 1993, <https://mfa.gov.il/>, Ենթադրվում էր, որ անցումային միջանկյալ շրջանը չպետք է զերագանցեր 5 տարին՝ սկսվելով իսրայելական զինուժի դուրսբերմամբ՝ համաձայն Գազա-Երիքով համաձայնագրի (1994թ.), և շարունակվելով առավելագույնը մինչև 1999թ., իսկ վերջնական կարգավորումը պետք է հիմնված լիներ ՄԱԿ-ի ԱԽ-ի 242-րդ և 338-րդ բանաձևերի վրա՝ որպես խաղաղության գործընթացի հիմքի:

²³ Նույնը:

միջնորդ, թե՛ որպես երաշխավոր ու ֆինանսական դոնոր: Մա արտահայտվեց նաև 1994թ.-ին՝ Հորդանան-Իսրայել խաղաղության պայմանագրի նախապատրաստման և ստորագրման ժամանակ: Պայմանագիրը լուծում էր երկու երկրների միջև հարաբերությունները, ճշգրտում հողի և ջրի վեճերը և նախատեսում լայնածավալ համագործակցություն զբոսաշրջության և առևտրի ոլորտում: Ո՛չ Հորդանանը, ո՛չ էլ Իսրայելը չպետք է թույլ տային որևէ երրորդ կողմի օգտագործել իրենց տարածքը Հորդանանին կամ Իսրայելին հարված հասցնելու համար²⁴:

1997 թ. ՄԱԿ-ի ԱԽ-ի մեծամասնությունը երիցս պահանջեց Իսրայելից դադարեցնել բնակավայրերի կառուցումը Երուսաղեմի Հար Հունա արվարձանում: ԱՄՆ-ը վետո դրեց այդ բանաձևերի վրա, չնայած 1996թ. դեկտեմբերին նախագահ Քլինթոնը Իսրայելի բնակելի տարածքների կառուցման քաղաքականությունը անվանել էր «խաղաղության խոչընդոտ»: 1998-ի հոկտեմբերին ԱՄՆ-ի 9-օրյա միջնորդական գործողությունների արդյունքում Մերիլենդում ստորագրվեց Ուայ Ռիվերի հուշագիրը²⁵: Այն նախատեսում էր Իսրայելի՝ Արևմտյան ափի 13 տոկոսից դուրս գալը, 750 պաղեստինցի բանտարկյալների ազատ արձակումը և Գազայի օդանավակայանի բացումը: Դրա դիմաց պաղեստինցիները համաձայնեցին դուրս բերել 26 հակաիսրայելական կետեր ՊԱԿ-ի կանոնադրությունից, ձերբակալել Իսրայելի կողմից հետախուզվող կասկածյալների, հետախուզական տեղեկատվություն տրամադրել Իսրայելի անվտանգությանը և նվազեցնել ռստիկանների քանակը՝ ուժի սահմանափակումներին համապատասխանելու համար: Իսրայելը և ՊԱԿ-ը վավերացրին համաձայնագիրը: Հետևելով համաձայնագրի դրույթներին՝ Իսրայելը դուրս եկավ Արևմտյան ափի որոշ շրջաններից, իսկ ՊԱԿ-ի կողմից ՊԱԿ-ի կանոնադրությունից հանվեցին հակաիսրայելական 26 դրույթները:

1993-2000թթ. ԱՄՆ-ը միջնորդեց մի շարք համաձայնագրեր, որոնք հանգեցրին Իսրայելի գործերի դուրսբերմանը Գազայի հատվածի մեծ մասից և Արևմտյան ափի շրջաններից՝ պաղեստինցիներին 1-ին անգամ տալով ինքնավարության աստիճան: Սակայն այդ ընթացքում Իսրայելը սահմանափակեց պաղեստինցիների շարժունակությունը տվյալ տարածքների ներսում և Գազայի ու Արևմտյան ափի միջև²⁶:

Խաղաղության բանակցությունները շարունակելու համար 2000թ. հուլիսի 5-ին ԱՄՆ-ի նախագահ Բ. Քլինթոնը վարչապետ Է. Բարակին և Յ. Արաֆատին հրավիրեց Քեմփ Դեյվիդ: Նոր բանակցություններում ամենաբարդը Երուսաղեմի կարգավիճակի և պաղեստինցի փախստականների վերադարձի հարցի շուրջ համաձայնության գալն

²⁴ Treaty of Peace Between the State of Israel and the Hashemite Kingdom of Jordan, <https://peacemaker.un.org/>.

²⁵ The Wye River Memorandum Archived 15 July 2001 at the Wayback Machine. Knesset website, 23 October 1998, <https://web.archive.org/>.

²⁶ **Ronny Modigs**, նշվ. աշխ., էջ 28:

էր: Քլինթոնն առաջարկում էր պաղեստինցիներին հանձնել Արևմտյան ափի նախ 73 տոկոսը, ապա հաջորդ 10-25 տարիների ընթացքում՝ 94 տոկոսը (առանց Արևելյան Երուսաղեմի): Այս տարածքների վրա պետք է հռչակվեր անկախ պաղեստինյան պետություն, 100.000 փախստականները վերադառնալու էին իրենց երկիր՝ Երուսաղեմի հարավային ու հյուսիսային պաղեստինցիներով բնակեցված շրջաններ: Բարայելը վերահսկելու էր Արևմտյան ափի ջրային ակունքների մեծ մասը և պաղեստինցիների մասնակցությամբ Հորդանանի ու Եգիպտոսի հետ արտաքին սահմանը: Բանակցությունները ձախողվեցին՝ ըստ ԱՄՆ-ի Յ. Արաֆաթի մեղքով²⁷:

2000թ. դեկտեմբերի 24-ին Բ. Քլինթոնը հանդես եկավ նոր առաջարկությամբ (**Clinton parameters**)՝ Երուսաղեմը բաժանել 3 մասի (Բարայելին անցնող քրիստոնեական կամ հայկական, հրեական, և մուսուլմանական թաղամասեր), ՊԱԿ-ին զիջել արևմտյան ափի 90%-ը, եթե Երուսաղեմն ու Մեռյալ ծովը համարվեն արևմտյան ափի մաս, փախստականներից 100.000-ի՝ Բարայել, իսկ մնացածի՝ Գազա ու Արևմտյան ափ վերադարձ, Բարայելի կողմից Արևմտյան ափի 95%-ի զիջում՝ դրա դիմաց ստանալով հրեական բնակավայրերը: Առաջարկները մերժվում են²⁸:

Կողմերին հաշտեցնելու Բ. Քլինթոնի վերջին փորձը Թաբայի բանակցություններն էին՝ 2000թ. հունվարի 21-ին: Մակայն, ԱՄՆ այս բանակցություններում գերակա դիրքերից չներկայացավ: Ընդհանուր հայտարարությունում ուղղակի նշվեց, որ կողմերը երբեք այդքան մոտ չէին եղել համաձայնության ձեռքբերմանը²⁸:

2000թ. ԱՄՆ-ում և Բարայելում դեկավարների փոփոխությունը այլևս չէր ենթադրելու ձեռք բերված արդյունքների հետագա զարգացում²⁹:

Իրաքի ուղղությամբ ՄԱԿ-ի ԱԽ-ի ընդունած բանաձևերը զսպման դոկտրինի համատեքստում

Բ. Քլինթոնի օրոք զսպման դոկտրինի ուղղակի հասցեատերն արաբական Մերձավոր Արևելքում Իրաքն էր: Այն նախևառաջ արտահայտվեց ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերով, ինչի համար հող հանդիսացավ Ծոցի ճգնաժամը: Դատապարտելով Իրաքի ներխուժումը Քուվեյթ, ՄԱԿ-ի ԱԽ-ի 660-րդ (1990թ.) բանաձևով իր աջակցությունը հայտնելով բոլոր և հատկապես Արաբական պետությունների լիգայի կողմից իրադրությունը կարգավորելու համար ձեռնարկված քայլերին, պահանջեց առանց նախապայմանների դուրս բերել զորքերը մինչև 1990 թ. օգոստոսի 2-ը գոյություն ունեցած դիրքեր ու անհապաղ բանակցություններ սկսել³⁰:

²⁷ Ronny Modigs, նշվ. աշխ., էջ 30.

²⁸ Taba Summit - Joint Statement - English (2001), Economic Cooperation Foundation, https://ecf.org.il/media_items/949.

²⁹ Barak to Bush: Sharon is not bound by negotiating ideas (Communicated by the Prime Minister's Media Adviser), Israel Ministry of Foreign Affairs. February 8, 2001, <https://web.archive.org>

³⁰ Resolution 660 (1990) of 2 August 1990 of the Security Council, <http://unscr.com>

Իրաքի կողմից ՄԱԿ-ի ԱԽ-ի 660-րդ բանաձևի պահանջների չկատարումը 1990թ. օգոստոսի 6-ին հանգեցրեց նոր՝ 661-րդ բանաձևի ընդունմանը: Հիմք ընդունելով առանց զենքի կիրառման հարկադրանքի միջոցների կիրարկմամբ Կանտոնադրության VII գլխի դրույթները, վկայակոչելով ՄԱԿ-ի Կանտոնադրության 51-րդ հոդվածով հավաքական կամ անհատական ինքնապաշտպանության անօտարելի իրավունքը, ՄԱԿ-ի ԱԽ-ն այս բանաձևով նախատեսեց **տնտեսական հարկադրանքի կիրառում** Իրաքի նկատմամբ: Արգելվեց ցանկացած ապրանքի ներկրում Իրաքից և Քուվեյթից, ինչպես նաև արտահանում դեպի այդ երկրներ: Բացառություն էին կազմում հումանիտար օգնության շրջանակներում, բացառապես բժշկական նպատակների համար և սննդամթերքի մատակարարումը: Զուգահեռ ՄԱԿ-ի ԱԽ-ին առընթեր ստեղծվեց Անվտանգության խորհրդի Հատուկ հանձնաժողով, որն ամենօրյա ռեժիմով պետք է հետևեր բանաձևի դրույթների կատարմանը: Միջազգային հանրությունը պարտավորվում էր չճանաչել Իրաքում ձևավորված օկուպացիոն ռեժիմը, իսկ վերոնշյալ ֆինանսական և տնտեսական հարկադրանքները չպետք է որևէ կերպ խոչընդոտեին միջազգային հանրության կողմից Քուվեյթի օրինական իշխանություններին աջակցելուն³¹:

660-րդ և 661-րդ բանաձևերի դրույթների չկատարմանը հետևեց 678-րդ (1990թ. նոյեմբերի 29) բանաձևի ընդունումը, որը Քուվեյթի օրինական իշխանությունների հետ համագործակցող պետություններին իրավունք էր տալիս Իրաքի կողմից 660-րդ բանաձևի պահանջները չկատարելու դեպքում ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները՝ ընդհուպ մինչև ուժի կիրառում, 660-րդ և հաջորդած բանաձևերի իրականացման ուղղությամբ³²: Այս բանաձևի հիմքերի վրա էլ ձևավորվեցին ԱՄՆ-ի գլխավորությամբ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող կոալիցիոն ուժերը³³: Փաստորեն 678 բանաձևը օրինականացնում էր ուժի կիրառումը Իրաքի կողմից ագրեսիայի շարունակման դեպքում:

Հարկ է նշել, որ Քուվեյթի ճգնաժամը, Ծոցի պատերազմը և կոալիցիոն ուժերի գործելը դեռևս սառըպատերազմյան շրջանից եկած Քարտերի դոկտրինի գործնականում 2-րդ կիրառումն էր: Այդ դոկտրինը հրապարակ եկավ ԽՍՀՄ-ի՝ 1979թ. Աֆղանստան ներխուժումից հետո: Մասնավորապես նշվում էր, որ Պարսից ծոցի տարածաշրջանի նկատմամբ վերահսկողություն հաստատելու ցանկացած արտաքին ուժի

³¹ Resolution 661 (1990) of 6 August 1990 of the Security Council, <http://unscr.com>. Սրան հաջորդում է ՄԱԿ-ի ԱԽ-ի 664-րդ բանաձևը (18 օգոստոս, 1990թ.), որով պահանջվում էր իրաքյան իշխանություններից՝ թույլ տալ երրորդ երկրների քաղաքացիներին անվտանգ դուրս գալ Իրաքից և Քուվեյթից:

³² Resolution 678 (1990) of 29 November 1990 of the Security Council, <http://unscr.com>.

³³ Նույնը:

փորձ կհամարվի հարձակում ԱՄՆ-ի կենսական շահերի վրա, և այդպիսի հարձակումը կհակադարձվի ցանկացած անհրաժեշտ միջոցներով՝ ընդհուպ մինչև ռազմական ուժի կիրառումը³⁴:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 687-րդ բանաձևը (1991 թ. ապրիլի 3) սահմանեց Ծոցի պատերազմում պարտվելուց հետո Իրաքի պարտավորությունները: Այն կոչ էր անում Իրաքին և Քուվեյթին հարգելու երկու երկրների միջև եղած սահմանը և գլխավոր քարտուղար Խավիեր Պերես դե Կուելային պարտավորեցնում ապակայունացված գոտու երկայնքով մեկ ամսվա ընթացքում ներկայացնել ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելության տեղակայման ծրագիրը: Իրաքը պետք է ոչնչացնէր քիմիական ու կենսաբանական զենքերը և 150 կմ-ից ավել հեռահարության բոլոր հրթիռները, հրաժարվէր միջուկային զենքի ստեղծման ծրագրերից, ներկայացնէր զենքերի ստեղծման վերաբերյալ համապատասխան հայտարարագրեր և համաձայնվէր տեղում ստուգումների իրականացմանը:

Ժողովրդավարության հիմնարար սկզբունքների հիման վրա զսպման քաղաքականության իրականացման օրինակ էր ՄԱԿ-ի ԱԽ-ի 688-րդ բանաձևը (1991թ. ապրիլի 5) Իրաքի՝ մասնավորապես քրդաբնակ տարածքներում մարդու իրավունքների ապահովման վերաբերյալ: Այն պարտավորեցնում է Իրաքին հարգել փոքրամասնությունների մարդկային և քաղաքական իրավունքները, հնարավորություն ընձեռել միջազգային մարդասիրական կազմակերպություններին օգնություն ցուցաբերելու Իրաքի բոլոր շրջաններում և մատչելի դարձնել անհրաժեշտ միջոցները համապատասխան գործողությունների կատարման համար:

Զանգվածային ոչնչացման զենքի դեմ պայքարի տեսանկյունից, որը Բուշ Կրտսերի 2002թ. Ազգային անվտանգության ռազմավարության հիմնասյուներից էր, ՄԱԿ-ի ԱԽ-ի 715-րդ բանաձևը՝ միաձայն ընդունված 1991 թ. հոկտեմբերի 11-ին, հաստատեց Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱՏԵՄԻԳ) ծրագրերը և հորդորեց ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին, կապված Իրաքի ԶՈԶ ծրագրերի երկարաժամկետ մոնիտորինգի հետ, ապահովել Իրաքի կրկնակի օգտագործման օբյեկտների «շարունակական մոնիտորինգ և ստուգում»³⁵: ԱԽ-ը նաև որոշում կայացրեց, որ ՄԱԿ-ի Հատուկ հանձնաժողովը՝ որպես ԱԽ-ի դուստր նախաձեռնություն, կշարունակի իրավունք ունենալ ստուգելու և համագործակցելու ԱՏԵՄԻԳ-ի հետ և կատարելու այլ գործառնություններ, որպեսզի թույլ տա լիարժեք իրականացնել ընթացիկ բանաձևը: Այն նաև պահանջեց, որ Իրաքը անվերապահորեն կատարի իր ստանձնած պարտավորությունները՝ համագործակցելով ԱՏԵՄԻԳ -ի և Հատուկ հանձնաժողովի հետ ստուգման

³⁴ President James E. Carter Jr. State of the Union Address The Capitol, Washington, D.C. January 23, 1980, p.4, www.airforcemag.com

³⁵ **Whitby, Simon M.** (2002). Biological warfare against crops. Palgrave Macmillan. p. 13. ISBN 978-0-333-92085-5.

ողջ ընթացքում: Իրաքը, որը նախկինում մերժել էր նման բանաձևերը կամ համաձայնել էր միայն սկզբունքորեն, լիովին ընդունեց 715-րդ բանաձևի դրույթները³⁶:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 986-րդ բանաձևը վերաբերում էր Իրաքում արտադրվող նավթի և նավթամթերքների ներմուծման թույլտվությանը՝ որպես միջոց Իրաքի ժողովրդի հումանիտար կարիքները հոգալու համար: Հենց այս բանաձևի հիման վրա ձևավորվեց ԱՄՆ նախագահ Բ. Քլինթոնի կողմից ներկայացված և 1995թ. ՄԱԿ-ի կողմից հավանության արժանացած «Oil-for-Food Programme (OIF)»՝ «Նավթ պարենի դիմաց»³⁷ ծրագիրը՝ գոյություն ունենալով մինչև 2003թ. ավարտը:

ՄԱԿ-ի ԱԽ-ի 1060-րդ (1996թ.) բանաձևը հետևեց Իրաքի կողմից ստուգման օբյեկտներ ՄԱԿ-ի տեսուչների մուտքի արգելանքին՝ կոչ անելով Իրաքին Հանձնաժողովի տեսչական խմբերին թույլ տալու անհապաղ, անվերապահ և անսահմանափակ մուտք գործել ցանկացած շրջան, օբյեկտ, տրամադրել նրանց անհրաժեշտ փաստաթղթերը և տրանսպորտային միջոցներ³⁸:

ՄԱԿ ԱԽ-ը 1999թ. դեկտեմբերի 17-ին ընդունված տարվա վերջին՝ 1284-րդ բանաձևով ստեղծեց ՄԱԿ մոնիտորինգի, ստուգման և վերահսկման հանձնաժողով (UNMOVIC), որը եկավ փոխարինելու ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովին (UNSCOM)³⁹: Իրաքը մերժեց բանաձևը, մասնավորապես, քանի որ այն չէր բավարարում պատժամիջոցների վերացման իր պահանջը⁴⁰: Սակայն, սա չհանգեցրեց ՄԱԿ-ի տեսուչների վերադարձին կամ մարդասիրական ծրագրի փոփոխություններին:

Զապման դոկտրինի շրջանակներում ընդունված ներքին իրավական ակտերը Իրանի ուղղությամբ

Զապման դոկտրինի շրջանակներում ընդունված ակտերը, բացի Իրաքից, նաև ուղղված էին Իրանի դեմ: Մասնավորապես, 1995 թ.-ին, ի պատասխան Իրանի միջուկային ծրագրի և ԱՄՆ-ի կողմից ահաբեկչական կազմակերպություններ համարվող իրանական Հեզբոլլահին, Համասին և Պաղեստինի իսլամական ջիհադին իրանական աջակցությանը, նախագահ Բ. Քլինթոնը մի շարք հրամաններ ստորագրեց, որոնցից կարելի է առանձնացնել 1995 թ. մարտի 15-ին և մայիսի 6-ին ընդունված իրավական ակտերը համապատասխանաբար՝ Իրանի էներգետիկ ոլորտում ԱՄՆ-ի ներդրումների և ԱՄՆ-ի կողմից Իրանում առևտուրն ու ներդրումները արգելելու մասին:

³⁶ Hiro, Dilip (2001). Neighbors, not friends: Iraq and Iran after the Gulf wars. Routledge. p. 72. ISBN 978-0-415-25412-0.

³⁷ Բառացանկ. ՄԱԿ-ը Հայաստանում <https://www.un.am/hy/glossary/%D5%86>.

³⁸ Resolution 1060 (1996) Adopted by the Security Council at its 3672nd meeting on 12 June 1996, <http://unscr.com>

³⁹ "Security Council establishes new monitoring commission for Iraq". United Nations. 17 December 1999.

⁴⁰ "Iraq rejects UN resolution on easing sanctions". RTÉ. 18 December 1999.

Հաջորդ քայլը Կոնգրեսի կողմից 1996թ. ընդունված Իրանի և Լիբիայի պատժամիջոցների մասին օրենքն էր (ILSA), որը նախատեսում էր տնտեսական պատժամիջոցների սահմանում Իրանի և Լիբիայի հետ բիզնեսով զբաղվող ձեռնարկությունների նկատմամբ^{41, 42}:

Այս ակտերի էությունը լավագույնս բացահայտելու համար հարկ է ներկայացնել սենատոր Ալֆոնս Դ'Ամատոյի կողմից 1995թ. սեպտեմբերին Սենատին ներկայացված «Իրանի և Լիբիայի պատժամիջոցների մասին ակտը», որն ընդունվեց 1996թ.:

Այս փաստաթուղթն ԱՄՆ-ին թույլ էր տալիս պատժամիջոցներ կիրառել Իրանում կամ Լիբիայում գիտակցաբար ներդրումներ կատարած անձանց, ձեռնարկությունների կամ կորպորացիաների նկատմամբ⁴³: Սակայն ակտի և միջազգային իրավունքի միջև կային մի շարք հակասություններ, որոնք հնարավորություն էր տալիս որոշ երկրների մանրերելու⁴⁴:

ԱՄՆ-ի այս քաղաքականությունը հիմք հանդիսացավ Բաքու-Ջեյհան այլընտրանքային նավթամուղի ստեղծմանը, որը գործարկեց 2005թ.-ից:

Եզրահանգում. Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության լեգիտիմ իրականացման համար անհրաժեշտ գործիք հանդիսացան և իրավապայմանագրային հիմքը կազմեցին ՄՄԿ-ի ԱԽ բանաձևերը, Խաղաղության գործընթացի շրջանակներում ձեռք բերված համաձայնությունները, ինչպես նաև նոր աշխարհակարգի պայմաններում զսպման դոկտրինի իրականացման նպատակով ընդունված ԱՄՆ-ի ներպետական իրավական ակտերը:

Տարածաշրջանային քաղաքականության վերոգրյալ իրավապայմանագրային հիմքը լիովին արտահայտում էր նոր աշխարհակարգում ԱՄՆ-ի գերակայության ձգտումները և առկա մարտահրավերները: Մասնավորապես կարելի է տարբերակել ահաբեկչության և զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարին, ինչպես նաև ժովրդավարության խթանմանն առնչվող իրավական փաստաթղթերը, որոնք հետագայում ուղղակիորեն կազմեցին Ջ. Բուշ Կրտսերի նախագահության տարիներին ազգային անվտանգության ռազմավարության և տարածաշրջանային քաղաքականության իրականացման հիմքը:

⁴¹ "H.R.3107-Iran and Libya Sanctions Act of 1996".07/16/1996. <https://www.congress.gov/bill/104th-congress/house-bill/3107>.

⁴² Zengerle, Patricia, "Extension of Iran Sanctions Act passes U.S. Congress". Reuters., 2 December 2016. <https://www.reuters.com/article/us-iran-nuclear-usa-sanctions-idUSKBN13Q5JW>

⁴³ Jonathan Sutherland, Diane Canwell, Key Concepts in International Business, D'Amato Act, p. 47. https://link.springer.com/chapter/10.1007%2F978-0-230-20466-9_4

⁴⁴ Kenneth Katzman, The Iran Sanctions Act (ISA), SRC Report for Congress, October 12, 2007, www.fas.org/sgp/crs/row/RS20871.pdf

Միևնույն ժամանակ կարելի է նկատել, որ հետսառըպատերազմյան շրջանում ԱՄՆ-ՄԱԿ հարաբերություններում դրսևորում էր երկակիություն. եթե խաղաղության գործընթացում ԱՄՆ-ի միջնորդությամբ իրականացվող բանակցությունները և ստորագրված համաձայնությունները ունեին փաստացի գերակայություն ՄԱԿ-ի ԱԽ-ի բանաձևերի նկատմամբ, իսկ ԱՄՆ-ի թվացյալ անաչառության պայմաններում քաղաքական ու դիվանագիտական աջակցությունն ուղղված էր Իսրայելին, ապա Իրաքի պարագայում 90-ականներին ԱՄՆ-ը խուսափում էր հանդես գալ որպես միանձնյա առաջնորդ և գործողությունները Ծոցի ճգնաժամի ընթացքում իրականացնում էր որպես ձևավորված կռաւիցիայի առաջնորդ՝ համաձայն ՄԱԿ-ի ԱԽ-ի մանդատի, ինչը պայմանավորված էր նոր աշխարհակարգային որակական փոփոխություններով, Ծոցում իրականացվող քաղաքականության վերախմաստավորմամբ, ինչպես նաև տեղի արաբ առաջնորդների հետ հարաբերությունները չվատթարացնելու միտումով: Կարևոր է այն, որ սույն բանաձևերն իրավապայմանագրային հող հանդիսացան Իրաքի վրա անմիջական, ուղղակի ազդեցությունը խորացնելու, ցանկացած տնտեսական կամ ռազմական պատժամիջոց կիրառելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար: Ջորջ Բուշ Կրտսերի վարչակազմը, կտրուկ փոխելով արտաքին քաղաքականության մերձավորարևելյան շեշտադրումները, փաստացիորեն հավատարիմ մնաց նախորդ նախագահների օրոք որդեգրած արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքներին: Նպատակը մնում է նույնը՝ շարունակաբար ընդլայնել ԱՄՆ-ի ազդեցությունը Մերձավոր Արևելքում, անկախ այն բանից՝ փափուկ թե կոշտ ուժ է կիրառվում:

Ինչ վերաբերում է զսպման դոկտրինի շրջանակներում ընդունված ներպետական ակտերին, ապա դրանք հիմնականում ուղղված էին Իրանի և Լիբիայի դեմ, որոնք, ԱՄՆ-ի կարծիքով, ահաբեկչությանն աջակցող պետություններ էին, որոնց հետ սեփական և այլ պետությունների քաղաքացիների ու ընկերությունների առևտուրը և ներդրումները՝ մասնավորապես նավթարդյունաբերության և ենթակառուցվածքների ոլորտում, համարվում էին աջակցություն ահաբեկչությանը: Ուստի, ԱՄՆ-ը, օգտագործելով «միակողմանիության պահը» և առկա ուժային վակուումը, փորձեց ներպետական ակտերը վերածել համաշխարհային քաղաքականության իրականացման կանոնակարգերի՝ քաղաքականություն, ինչը սկիզբ առավ Առաջին աշխարհամարտի ավարտի հետ՝ որպես վիլսոնականության արտահայտում, և շարունակվում է մինչ օրս կոնկրետ երկրների, անհատների ինչպես նաև գործողության տեսակների դեմ՝ սահմանափակելով կամ զգալիորեն վտանգելով նաև երրորդ երկրների շահերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք ասել, որ չնայած 2001-2009թթ. ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության շեշտադրումները կրեցին նեոկոնսերվա-

տորների ազդեցությունը, սակայն տարածաշրջանային քաղաքականության նորագույն փուլի տեսանկյունից բուն էությունը մնաց անփոփոխ՝ համապատասխանելով ամերիկյան ԲԱՄ-ի հիմնադրույթներին:

О ЮРИДИЧЕСКОДОГОВОРНЫХ ОСНОВАХ БЛИЖНЕВОСТОЧНОЙ ПОЛИТИКИ США В ПЕРИОД ПОСЛЕ ХОЛОДНОЙ ВОЙНЫ

Այրապետյան Ա. Տ.

Ключевые слова: *Ближний Восток, Израиль, Организация освобождения Палестины, ООН, Совет Безопасности, акт, резолюция, соглашение, Ирак, Иран.*

Начиная с 2001-го года в Ближневосточной политике США произошли перестановки стратегических акцентов, которые в основном представлены переосмыслением целей внешней политики и национальной безопасности под влиянием политико-идеологических кругов. Тем не менее, несмотря на влияние неоконсервативистов и сторонников примыкающих к ним политического реализма, региональная политика США продолжила сохранение своей традиционной линии, а именно реализовывалась в международных и внутригосударственных юридических актах во время и после холодной войны. Изучением основ указанных юридических договоров становится ясно, что основные ориентиры региональной политики Джорджа Буша младшего вырисовываются в подписанных им документах еще до его президентства в борьбе против терроризма, оружия массового поражения и развития демократии.

ON THE LEGAL-CONTRACTUAL BASIS OF THE US POST-COLD WAR MIDDLE EAST POLICY

Hayrapetyan A. S.

Key words: *Middle East, Israel, Palestine liberation organization, UN, Security Council, act, resolution, agreement, Iraq, Iran.*

Since 2001, there has been a major shift in the US Middle East policy strategic highlights, mainly through rethinking of foreign policy and national security targets under the influence of political and ideological circles. Nevertheless, despite the impact of neoconservatives and the proponents of neoconservatism views in the face of hard line political realists, US regional policy continued to maintain its traditional thrust, being implemented based on the international and domestic contractual and legal acts during the Cold War and post-Cold War. Examining the

above-mentioned legal-contractual basis, it becomes clear that the main directions of George Bush Jr.'s regional policy, in the form of the war on terror, fight against the proliferation of WMD and democracy promotion were quite well identified in the documents signed before his presidency.

R e f e r e n c e s

1. **Surkov N.** Politika SSHA v bližnevostochnom uregulirovanii v 70-ie gg. 20-ogo i v nachale 21-ogo v. MGU, Moskva, 2007 **(In Russian)**.
2. Baracank. MAK-@ Hayastanum, www.un.am **(In Armenian)**.

Ընդունվել է՝ 12. 10. 2020

Գրախոսվել է՝ 19. 10. 2020

Հանձնվել է տպ.՝ 20. 11. 2020

Տեղեկություններ հեղինակի մասին

Աստղիկ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի
միջազգային հարաբերությունների բաժնի ասպիրանտ,
Էլ. հասցե՝ astghayrapetyan@gmail.com